Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
հոկտեմբերի 15 -ի N 197 - Ա որոշման

«Զբոսայգու հիմնում»
ծրագիր

1.	**Ծրագրի նպատակ**	ՀՀ, Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքում կառուցվող Ընտանեկան մարզահամալիրին հարող տարածքում զբոսայգու հիմնումը, անհրաժեշտ գույքով կահավորումը, նպատակ ունի քաղաքային միջավայրի բարելավման արդի մշակույթի նոր չափանիշ ու ուղեցույց սահմանել և իրագործել Մասիս քաղաքի զարգացման հայեցակարգում, մասնավորապես՝ քաղաքաշինական (մարզահամալիր, ճանապարհ, ճեմուղի, ենթակառուցվածքներ), բնապահպանական (մոտ 4300 քմ կանաչ տարածք), գեղագիտական (ճարտարապետական և ոճային ժամանակակից լուծումներ), առողջ ապրելակերպի (մինի ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, խաղասարքեր, մարզասարքեր), հանրային-դաստիարակչական-ժամանցային (եռասերունդ ընտանեկան հանգստի անվճար կազմակերպման հնարավորություն, մանկական խաղահրապարակ, զրուցատաղավարներ) տեսանկյուններից, որի արդյունքում հետագա բոլոր նմանատիպ ձեռնարկումները նախանշված կլինեն պահպանելու, զարգացնելու, հանրության մասնակցությունն ապահովելու արդեն իսկ կյանքի կոչված ծրագրով:
2.	**Ծրագիրը բարեգործական որակելու նպատակ**	Հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ստանալը:
3.	**Բարեգործը**	Adibekian Family Foundation For Advancement (AFFA) a.s.b.l., 142-144 rue Albert Unden L-2652, Luxemburg «Ադիբեկյան ֆեմիլի ֆաունդեյշն ֆոր ըդվենսմենթ (ԱՖՖԱ) ա.ս.բ.լ.» ոչ առևտրային կազմակերպություն, Գագիկ Ադիբեկյան
4.	**Ծրագիրը կատարող**	Սույն ծրագիրն իրականացվում է Մասիսի Զարգացման Հիմնադրամի կողմից: Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս 0801, 3-րդ թաղամաս, 10-րդ շենք, բն. 5 Գործունեության իրականացման հասցե՝ ՀՀ, ք. Մասիս, Հանրապետության 11 ՀՎՀՀ 04227989
5.	**Ծրագրի իրականացման վայր և**	Ծրագիրն իրականացման վայրն է՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, 7-րդ

	բնագավառ	թաղամաս, 3-րդ փողոց Բարեգործական ծրագրի բնագավառն է՝ մարզա-առողջարարական
6.	**Ծրագրի բյուջե**	2018թ. սեպտեմբերի 1-ից - 2019թ. հունիսի 30-ը, զբոսայգու հիմնման համար անհրաժեշտ ֆինանսավորումը կազմում է 402,000,000 դրամ
7.	**Բարեգործություն ստացող**	Մասիսի քաղաքային համայնք:
8.	**Ծրագրի իրականացման տևողություն**	Ծրագիրն իրականացվելու է 2018թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019թ. հունիսի 30-ը:
9.	**Միջոցառումների նկարագրություն և ժամկետներ, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալ**	Ծրագրով նախատեսված ժամանակաշրջանում կատարվելու են հետևյալ միջոցառումները՝ **Միջոցառման նկարագրությունը** — **Ֆինանսական միջոցների ծավալը** (հազ. դրամ) 1. Զբոսայգու համար անհրաժեշտ գույքի ներմուծում — 287,000,000 2 Զբոսայգու բարեկարգման ծառայությունների ձեռքբերում — 110,000,000 3. Չնախատեսված այլ ծախսեր — 5,000,000 **Ընդամենը** — **402,000,000** Միջոցառումները իրականացվելու են 2018թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019թ. հունիսի 30-ը:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիր, ծավալներ և նախատեսվող գին**	**Ներմուծվող ապրանքներ** — **Նախատեսված գումարը** (հազ. դրամ) 1. Խաղասարքերի և մարզասարքերի ներմուծում — 70,000,000 2. Զբոսայգու կահույքի ներմուծում (նստարաններ, աղբամաններ, հեծանվային կայանատեղիներ, թենիսի սեղաններ, մուլտիերոսների արձանիկներ) — 46,000,000 3. Զբոսայգու ոռոգման և շատրվանների համակարգերի ներմուծում — 60,000,000

		4. Զբոսայգու ցանկապատերի ներմուծում 7,000,000 5. Խաղահրապարակի ռետինե հատակի նյութերի ներմուծում 12,000,000 6. Տեսա-ձայնային համակարգերի ներմուծում 40,000,000 7. Լուսավորության համակարգերի ներմուծում 16,000,000 8. Ծառերի և թփերի ներմուծում 36,000,000 9. Զբոսայգու բարեկարգման ծառայությունների ձեռքբերում 110,000,000 10. Չնախատեսված ծախսեր 5,000,000 **Ընդամենը** **402,000,000** Միջոցառումները իրականացվելու են 2018թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2019թ. հունիսի 30-ը:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր**	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	**Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Սույն ծրագրի իրականացման նպատակով Մասիսի Զարգացման Հիմնադրամը համագործակցում է Մասիսի քաղաքապետարանի հետ:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն**	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25 կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազոր մարմին: Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ